

**ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՎ
ՔԱՂԱՔԱՑԻԱԴՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ***

ՀՏԴ 343.535.2

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական իրավաբանական
խորհրդատվության կենտրոնի դասախոս-կոորդինատոր,
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի անդամ,*

*Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*

tigranmarkosyan@ysu.am

*Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ու վերլուծել սնանկության վարույթում
կարևոր տեղ զբաղեցնող ինստիտուտներից մեկի՝ կանխամտածված սնանկության
հիմքով քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման հետ կապված
հարցերը: Հետազոտության ընթացքում խնդիր է դրվել բացահայտել
կանխամտածված սնանկության էությունը, ներկայացնել դրա դրսևորման
հիմնական ձևերը, վերհանել պարտապանի ֆինանսական վիճակի պատշաճ
վերլուծության նշանակությունը, ինչպես նաև պարզաբանել կանխամտածված
սնանկության դեպքում պարտատերերի իրավունքների պաշտպանության
ընթացակարգերը:*

*Հետազոտության ժամանակ կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ,
սինթեզ), այնպես էլ հատուկ (իրավահամեմատական, համակարգակառուցված-
քային, վիճակագրական) մեթոդներ:*

*Հետազոտության արդյունքում հեղինակը հանգել է հետևության, որ
կանխամտածված սնանկության հիմքով քաղաքացիաիրավական
պատասխանատվության կիրառման կապակցությամբ առկա է օրենսդրության և
իրավակիրառ պրակտիկայի վարձագման հրատապ անհրաժեշտություն, որը, ի թիվս
այլնի, ենթադրում է սնանկության վարույթում այս հիմքով քաղաքացիաիրավական
պատասխանատվության ծագման պայմանների վերանայում և համապատասխան
ընթացակարգի ամրագրում, քրեաիրավական առումով կանխամտածված
սնանկության օբյեկտիվ կողմից վնաս պատճառելու հատկանիշի դուրսբերում,
ինչպես նաև պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության մեթոդիկայի
մշակում:*

*Հիմնաբառեր՝ ոչ իրավաչափ սնանկություն, կանխամտածված սնանկություն,
պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն, սնանկության գործով կառավարիչ:*

Ներածություն

Պատմության ընթացքը վկայում է, որ սեփականության բազմաձևության հիմքի
վրա խարսխված ազատ շուկայական տնտեսական հարաբերությունները չունեն

* Հոդվածը ներկայացվել է 24.07.2020թ., գրախոսվել՝ 24.07.2020թ., տպագրության
ընդունվել՝ 20.09.2020թ.:

այլընտրանք: Դրանք հասարակության ակտիվ ու ներդաշնակ զարգացման գլխավոր նախապայմանն են³⁷⁸: Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ ժամանակակից պայմաններում պետությունը հանդես է գալիս ոչ թե «գիշերային պահակ»-ի կարգավիճակում, այլ կրում է տնտեսական հարաբերությունների սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը երաշխավորող հուսալի պաշտպանվածության համակարգ ստեղծելու պարտականություն:

Շարադրվածի համատեքստում իր ուրույն տեղն է զբաղեցնում սնանկության ինստիտուտը, որն ուղղված է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը³⁷⁹: Այս հանգամանքը դրսևորվում է քաղաքացիական շրջանառության անվճարունակ սուբյեկտներին ֆինանսապես առողջացնելու կամ այդ անձանց քաղաքացիական շրջանառությունից հանելու և նրանց կողմից քաղաքացիական շրջանառության այլ մասնակիցների շահերի խախտումը կանխելու ձևով: Դրանով պայմանավորված էլ սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ ու պարտաճանաչ պարտապանին վերականգնելու իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրանց կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը³⁸⁰:

Պետք է նշել սակայն, որ որոշ դեպքերում սնանկության ինստիտուտն առանձին անբարեխիղճ սուբյեկտների կողմից օգտագործվում է ոչ թե իր հիմնական նպատակներով, այլ շահադիտական մղումներով ծառայեցվում է որպես պարտավորություններից ազատվելու միջոց՝ փաստացի վերածվելով գործարարության առանձին տեսակի³⁸¹: Այլ կերպ ասած՝ պարտապանի անվճարունակությունը երբեմն ծագում կամ ուղեկցվում է բնականոն տնտեսավարման հետ չկապված և ոչ իրավաչափ բնույթ կրող գործողություններով: Այդ պատճառով էլ իրավաբանական գրականության մեջ այդպիսի սնանկությունն առանձնացվում է չարամիտ, ոչ իրավաչափ կամ համարժեք այլ անվանմամբ³⁸²:

Ակնհայտ է, որ չարամիտ սնանկության դեպքում ոչ միայն խարխվում է սնանկության ինստիտուտի էությունը, այլև այս երևույթն ինքնին լրջագույն սպառնալիք է պարունակում պետության տնտեսական անվտանգության համար: Նման

³⁷⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**. - Ե.: «Իրավունք», 2010, էջ 117:

³⁷⁹ Տե՛ս **Кулахметов Б.Р.** Несостоятельность юридических лиц: особенности правового регулирования и правоприменительной практики // Модели, системы, сети в экономике, технике, природе и обществе, 2012, էջ 182:

³⁸⁰ Տե՛ս Սահմանադրական դատարանի 25.02.2008թ. թիվ ՍԴՈ-725, 27.01.2015թ. թիվ ՍԴՈ-1189 և 26.05.2020թ. թիվ ՍԴՈ-1542 որոշումները:

³⁸¹ Տե՛ս, օրինակ՝ **Ветров Д.М.** О некоторых вопросах преднамеренного банкротства юридического лица // Вестник Челябинского государственного университета. Право. 2011, №35(250), էջ 39, **Глушков Е.Л., Павличенко Н.В., Максименко А.В.** О некоторых проблемах применения ответственности за преступные деяния, связанные с банкротством предприятий и организаций // Вестник Воронежского института МВД России. ^{Право}. 2018, №4, էջ 140:

³⁸² Տե՛ս, օրինակ՝ **Добровлянина О.В., Кондратьева К.С., Патырбаева К.В.** Виды незаконных банкротств в Российской Федерации: некоторые проблемы правового регулирования // Право. Журнал Высшей школы экономики. 2017, էջ 37, **Середа И.М., Середа А.Г.** Анализ зарубежного законодательства, регламентирующего ответственность за преднамеренное банкротство // Журнал Высшей школы экономики. Право. 2018, №4(87), էջեր 66-67, **Шешукова Т.Г., Пашенко Т.В.** Методологические основы выявления неправомерного банкротства: контрольно-аналитический аспект // Бухгалтер и закон. Право. 2007, №4 (100), էջ 7:

պայմաններում առաջնային խնդիր է դիտարկվում չարամիտ սնանկությունների դեմ պայքարի համար արդյունավետ կառուցակարգերի ու ընթացակարգերի առկայությունը:

Կանխամտածված սնանկության ընդհանուր իրավական բնութագիրը

Ոչ իրավաչափ սնանկության դրսևորումների մեջ իր վտանգավորությամբ առանձնանում է կանխամտածված սնանկությունը: Դրա էությունն արտահայտվում է նրանում, որ շահագրգիռ անձը ձեռնարկում է ֆինանսապես առողջ պարտապանի սնանկության հատկանիշների առաջացմանն ուղղված միջոցառումներ՝ նպատակ ունենալով ստեղծել պարտապանի գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարման անհնարիություն: Ընդ որում, պարտապանի դիտավորյալ սնանկացումը վնաս է պատճառում ոչ միայն պարտատերերին, այլև պետությանը և պարտապանի աշխատողներին³⁸³:

Կանխամտածված սնանկությանը հանգեցնող վարքագիծը կարող է դրսևորվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, որոնց սպառիչ շրջանակը հասկանալի պատճառներով հնարավոր չէ սահմանել: Այնուամենայնիվ, գրականության մեջ առանձնացվում են կանխամտածված սնանկության հանգեցնող վարքագծի արտահայտման առավել տարածված հետևյալ ձևերը.

1. գույքի օտարում իջեցված գներով.
2. չհիմնավորված ծախսերի կատարում.
3. ակնհայտ ոչ շահեկան պայմաններով պարտավորությունների կուտակում.
4. գործունեության դադարեցում³⁸⁴:

Եական է նաև այն հանգամանքը, որ կանխամտածված սնանկությանը հանգեցնող գործողություններին շահագրգիռ անձը, որպես կանոն, մասնակից է դարձնում ազգականներին, ծանոթներին և այլ «դրածո» անձանց³⁸⁵: Ըստ էության, նման գործելաժողովը պայմանավորված է բողարկված ձևով դուրս բերված գույքի նկատմամբ պատշաճ վերահսկողություն պահպանելու անհրաժեշտությամբ:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ անձի վարքագիծը կանխամտածված սնանկության հատկանիշների դիտանկյունից ենթակա է գնահատման մինչև պարտապանի սնանկ ճանաչվելն ընկած ժամանակահատվածի մասով³⁸⁶: Դա պայմանավորված է այն իրողությամբ, որ անձին սնանկ ճանաչելու պահից կանխամտածված սնանկացման նպատակը կարելի է համարել իրագործված, իսկ այդ պահից հետո պարտապանի վճարունակության վրա ազդող գործողությունները ենթակա են գնահատման այլ խախտումների տեսանկյունից:

³⁸³ Տե՛ս Жилкин М.Г., Земцова А.В. К вопросу о применении норм об уголовной ответственности за криминальные банкротства // Общество и право, 2017, №4 (62), էջ 35:

³⁸⁴ Տե՛ս, օրինակ՝ Кальварский Г.В., Львова Н.А. Финансовая диагностика преднамеренного банкротства // Стратегические решения и риск-менеджмент. Экономика и бизнес. 2013, №4 (79), էջեր 54-57, Сверчков В.В., Воронов С.С. Преднамеренное банкротство юридического лица или предпринимателя: механизм преступного поведения и особенности квалификации // Вестник Нижегородской академии МВД России. Право. 2013, №21, էջեր 157-159, Добровлянина О.В., Кондратьева К.С., Патырбаева К.В. Виды незаконных банкротств в Российской Федерации: некоторые проблемы правового регулирования // Право. Журнал Высшей школы экономики. 2017, էջեր 39-40, Зуй И.В. Ответственность за преднамеренное банкротство в российском законодательстве // Евразийская адвокатура. 2017, №4 (29), էջ 101:

³⁸⁵ Տե՛ս Кондрашина И.А. Ответственность за преднамеренное и фиктивное банкротство по уголовному законодательству России – Казань: Познание, 2008, էջ 10:

³⁸⁶ Տե՛ս Ященко А.С. Преднамеренное банкротство: проблемы квалификации и разграничения смежных составов преступлений // Вестник Брянского государственного университета. Право. 2015 (3), էջ 179:

ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ «կանխամտածված սնանկություն» հասկացությունը կիրառվում է երկու՝ քրեաիրավական և քաղաքացիաիրավական առումներով: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի³⁸⁷ 193-րդ հոդվածով սահմանվում է. «Կանխամտածված սնանկությունը՝ պարտապանի հիմնադիրների (մասնակիցների) կամ նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով, և եթե պարտապանին կամ պարտատերերին պատճառվել է խոշոր վնաս...», իսկ ըստ «Սնանկության մասին» օրենքի³⁸⁸ (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի. «Եթե պարտապանը սնանկ է ճանաչվել պարտապանի կանոնադրական (բաժնետերեր, փայտահավաք) կապիտալին տիրապետող կամ նրան կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձանց, այդ թվում՝ պարտապանի ղեկավարի մեղքով (ուղղակի կամ անուղղակի գործողություններով պարտապանի գործունեությունն ուղղորդելը և այլն (կանխամտածված սնանկություն), ...»:

Վկայակոչված կարգավորումների համեմատական վերլուծությունից բխում է, որ քաղաքացիաիրավական և քրեաիրավական առումներով «կանխամտածված սնանկություն» հասկացությունները, չնայած դրանց որոշ ընդհանրություններին, ունեն բովանդակային տարբերություններ: Մասնավորապես, եթե քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության փաստի հաստատման համար բավարար է օրենքում թվարկված անձանց մեղավոր վարքագծի արդյունքում պարտապանի սնանկ ճանաչումը, ապա քրեաիրավական առումով կանխամտածված սնանկության հանցակազմի մեջ են մտնում ոչ միայն պարտապանի անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը, այլև դրանց չափի ավելացումը՝ ելնելով որոշակի շահերից և պայմանով, որ դա պարտապանին կամ պարտատիրոջը պատճառել է խոշոր վնաս, որը դրսևորվում է համապատասխան չափով պահանջի չբավարարմամբ³⁸⁹: Այլ կերպ ասած՝ քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության փաստի հաստատման համար անհրաժեշտ է ավելի Նեղ փաստակազմ, քան քրեաիրավական առումով կանխամտածված սնանկության դեպքում:

Վերոշարադրյալի համատեքստում լրացուցիչ քննարկման կարիք ունի քրեաիրավական առումով կանխամտածված սնանկության հանցակազմի շրջանակներում պարտատիրոջը կամ պարտապանին խոշոր վնաս պատճառված լինելու մասին պայմանի ամրագրումը: Բանն այն է, որ սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի լուծարման վարույթ սկսվելուց հետո սնանկության գործով կառավարչի կողմից Օրենքի 54-րդ և մի շարք այլ հոդվածների հիման վրա իրականացվում է պարտապանի գույքային զանգվածի վերականգնում: Արդյունքում մի կողմից ստացվում է, որ քանի դեռ չի սկսվել պարտապանի լուծարման վարույթը, հնարավոր չէ խոշոր վնասի առկայության փաստումը, իսկ մյուս կողմից սնանկության գործով կառավարչի գործողությունների հետևանքով հնարավոր է այդ վնասի առկայությունը բացառվի:

³⁸⁷ Ընդունվել է 18.04.2003թ.: Ուժի մեջ է մտել 01.08.2003թ.: Տե՛ս ՀՀԴՏ 2003.05.02/25(260) Հոդ. 407:

³⁸⁸ Ընդունվել է 25.12.2006թ.: Ուժի մեջ է մտել 10.02.2007թ.: Տե՛ս ՀՀԴՏ 2007.01.31/7(531) Հոդ. 139:

³⁸⁹ ՀՀ քրեական օրենսգրքը կանխամտածված սնանկության դեպքում խոշոր վնաս է դիտարկում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Նման պայմաններում «կանխամտածված սնանկության» ավարտված հանցագործության որակումը գործնականում էականորեն բարդանում է այն դեպքում, երբ անձի գործողություններն անվճարունակության հատկանիշների ստեղծման կամ դրանց չափի ավելացման առումով արդեն իսկ ունեն հանրային մեծ վտանգավորություն և հանգեցրել են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտմանը: Պատահական չէ, որ մի շարք երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա և այլն) կանխամտածված սնանկության դեպքում վնաս պատճառված լինելու հետևանքը նախատեսված չէ հանցակազմի տարրերի շարքում³⁹⁰:

Իրավաբանական գրականության մեջ քննարկվում է այն հարցը, թե արդյոք քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ համապատասխան անձի վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ³⁹¹:

Այն հանգամանքը, որ քրեաիրավական առումով կանխամտածված սնանկություն, այսինքն՝ հանցագործություն կատարած լինելու մասին կարելի է խոսել բացառապես դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, ուղղակիորեն բխում է Սահմանադրությամբ ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքից: Մինչդեռ դա ամենևին չի նշանակում, որ քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության հաստատումը կարող է տեղի ունենալ բացառապես քրեական դատավարության շրջանակներում:

Ասվածը ամենից առաջ պայմանավորված է այն իրողությամբ, որ սնանկության վարույթում այդ հասկացությունն ունի ինքնավար բնույթ և ուրույն բովանդակություն: Բացի այդ, չեն բացառվում իրավիճակները, երբ քրեական վարույթն ավարտվի հանցակազմի բացակայության հիմքով, սակայն առկա լինեն քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության հատկանիշներ: Միևնույն ժամանակ, չպետք է մոռացության մատնել այն դեպքերը, երբ քրեաիրավական առումով կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության դեպքում քրեական հետապնդումը դադարեցվում է ոչ արդարացնող հիմքերով:

Այս տեսանկյունից հիշատակման է արժանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ անկախ այն հանգամանքից, թե քրեական դատավարություններն ավարտվել են կարճմամբ կամ արդարացմամբ, քրեական պատասխանատվությունից ազատումը չպետք է խոչընդոտի ապացուցման նվազ բեռի հիմքով Նույն փաստերից ծագող փոխհատուցում վճարելու քաղաքացիական պատասխանատվության սահմանմանը³⁹²: Մեկ այլ Վեյլան ընդդեմ Մալթայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ քրեական դատավարության ընթացքում տարբեր երաշխիքներ են գործում մեղադրյալի օգտին, և հնարավոր է, որ նա անմեղ ճանաչվի ապացույցների անբավարարության հիմքով, այդուհանդերձ, մյուս կողմը չի կարող զրկվել ապացուցման այլ բեռով հատուցում պահանջելու համար դատարանի մատչելիության հնարավորությունից: Դատարանը գտել է, որ այլ մոտեցումը ոչ միայն չի բխում անմեղության կանխավարկածի վերաբերյալ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-

³⁹⁰ St' u Сereда И.М., Сereда А.Г. Анализ зарубежного законодательства, регламентирующего ответственность за преднамеренное банкротство // Журнал Высшей школы экономики. Право. 2018, №4(87), էջեր 67-72 և Глушков Е.Л., Павличенко Н.В., Максименко А.В. О некоторых проблемах применения ответственности за преступные деяния, связанные с банкротством предприятий и организаций // Вестник Воронежского института МВД России. Право. 2018, №4, էջ 142:

³⁹¹ St' u Ветров Д.М. О некоторых вопросах преднамеренного банкротства юридического лица // Вестник Челябинского государственного университета. 2011, №35(250), էջ 41:

³⁹² St' u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործով և Յ.-ն ընդդեմ Նորվեգիայի գործով 11.02.2003թ. վճիռները:

որ պարբերությունից, այլև ընդհանուր հիմք չունի Եվրոպայի խորհրդի անդամ երկրների իրավական համակարգերում, այլապես քրեական գործի կարծումը կամ ամբաստանյալի արդարացումը կարող է հանգեցնել տուժողի՝ քաղաքացիական գործով դատարան դիմելու իրավունքի կամայական կամ անհամաչափ սահմանափակման³⁹³:

Վերոշարադրյալի լույսի ներքո պետք է սակայն արձանագրել, որ Նույն փաստի առթիվ քրեական գործի առկայության դեպքում քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության հիմքով մեղավոր անձինք քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող են կրել միայն քրեական դատավարության ավարտից հետո:

Սնանկության կառավարչի դերը

կանխամտածված սնանկության բացահայտման հարցում

Կանխամտածված սնանկության հատկանիշների բացահայտման համար անհրաժեշտ է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն, որի նպատակն է պարզել կանխամտածված սնանկության համար հնարավոր պատասխանատու անձանց գործողությունների (անգործության) և պարտապանի ֆինանսական վիճակի փոփոխության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ բացակայությունը³⁹⁴:

Կանխամտածված սնանկության հատկանիշների բացահայտման հիմնական պարտականությունն օրենսդիրը դրել է սնանկության գործով կառավարչի վրա, ինչը պայմանավորված է նրա՝ որպես սնանկության վարույթի մասնակցի առանձնահատուկ կարգավիճակով: Մասնավորապես, Օրենքի 58-րդ հոդվածը ամրագրել է բոլոր սնանկության գործերով պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն իրականացնելու պահանջ, որի շրջանակներում սնանկության գործով կառավարիչը, ի թիվս այլնի, պետք է եզրակացություն ներկայացնի կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության կամ բացակայության մասին: Ընդ որում, կանխամտածված սնանկության հատկանիշներ բացահայտելու դեպքում սնանկության գործով կառավարիչը պարտավոր է հաղորդում ներկայացնել քրեական հետապնդման մարմիններին:

Հարկ է նկատել, որ պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը ներառում է պարտապանի գործունեության ոչ միայն ֆինանսական, այլև տնտեսական ասպեկտը³⁹⁵: Այս հանգամանքը պահանջում է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության իրականացման հիմքում հաշվապահական մոդելից շուկայական մոդելի անցում, որի հիմքում պետք է դրվեն ինչպես հաշվապահական փաստաթղթերը, որոնք որոշ դեպքերում կարող են լինել ոչ լիով կամ կեղծված, այնպես էլ արտաքին ու ներքին տնտեսական գործոնների ամբողջությունը³⁹⁶:

Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանխամտածված սնանկության դեպքերի թիվը վերջին մի քանի տարիների ընթացքում եղել է շուրջ մեկ

³⁹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Վեյլան ընդդեմ Մալթայի գործով 1.02.2014թ. վճիռը:

³⁹⁴ Տե՛ս Кальварский Г.В., Львова Н.А. Финансовая диагностика преднамеренного банкротства // Стратегические решения и риск-менеджмент. Экономика и бизнес. 2013, №4 (79), էջ 58:

³⁹⁵ Տե՛ս Никольская А.Г. Преступления в сфере экономической деятельности: учебное пособие. М.: Издательство Российской таможенной академии, 2011, էջ 192:

³⁹⁶ Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под. ред. д.ю.н., проф. С.А. Карелиной. Т. 1. – М.: Статут, 2019, էջեր 481-482:

տասնյակ այն դեպքում, երբ սնանկության գործերի թիվը 2016 թվականից առ այսօր տարեկան կտրվածքով գերազանցում է ութ հազարը³⁹⁷:

Նման իրավիճակը պայմանավորված է որոշակի հանգամանքներով, որոնցից առաջին հերթին կարելի է հիշատակել քննարկվող խնդրին վերաբերող տիպային փաստաթղթերի բացակայությունը: Իհարկե, ռուրտում որոշակի առաջընթաց պետք է համարել Օրենքի փոփոխությունների³⁹⁸ հիման վրա Արդարադատության նախարարի 12.03.2020թ. թիվ 102-Ն և 12.03.2020թ. թիվ 107-Ն³⁹⁹ հրամաններով համապատասխանաբար պարտապանի գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի վերաբերյալ հայտարարագրի և ֆինանսական վիճակի վերլուծության ձևերի սահմանումը⁴⁰⁰: Այնուհանդերձ, խիստ արդիական է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության մեթոդիկայի մշակման հարցը: Բացի այդ, ակնհայտ է, որ ֆինանսական վիճակի պատշաճ վերլուծությունը պահանջում է խորը մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ, որոնց ապահովման համար անհրաժեշտ է հետևողական աշխատանքների իրականացում:

Վերոգրյալի համատեքստում պետք է նկատի ունենալ, որ սնանկության գործով կառավարչի հիմնական պատասխանատու լինելը չի բացառում շահագրգիռ անձանց կողմից կանխամտածված սնանկության հատկանիշների բացահայտմանն ուղղված գործողությունները: Այլ կերպ ասած՝ կանխամտածված սնանկության հատկանիշների մասին կարելի է խոսել նաև այն դեպքում, երբ ֆինանսական վիճակի վերլուծությամբ նման եզրահանգում չի արվել, սակայն այդ հանգամանքի վերաբերյալ առկա է աուդիտի կամ համապատասխան փորձաքննության եզրակացություն⁴⁰¹:

Պարտատերերի պահանջների բավարարման ընթացակարգերը կանխամտածված սնանկության դեպքում

Կանխամտածված սնանկության հետևանքով ծագող քաղաքացիաիրավական պատասխանատվության հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենքի 8-րդ հոդվածով, որի համաձայն՝ պարտապանի կանխամտածված սնանկության համար պատասխանատու անձինք պարտապանի պարտավորություններով կրում են համապարտ պատասխանատվություն, եթե պարտապանի գույքն անբավարար է:

Մեղավոր անձի պատասխանատվության ծագման համար պարտապանի գույքի անբավարարության պայմանի ամրագրումը բավականին վիճահարույց է թվում: Այս մոտեցումը ամենից առաջ պայմանավորված է այն իրողությամբ, որ պարտապանի գույքի բավարարության կամ անբավարարության հարցի պարզումը ենթադրում է Օրենքով նախատեսված ծավալուն ու տևական գործողությունների կատարում, որպիսի պայմաններում մեղավոր անձանց հաշվին պարտատերերի պահանջների բավարարման ձգձգումը չունի որևէ ողջամիտ հիմնավորում: Բացի այդ, միայն պարտապանի գույքի անբավարարության դեպքում մեղավոր անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվության ծագման պայմանը հակասում է սնանկության վարույթի էությանը, որը կոչված է պաշտպանելու ոչ միայն պարտատերերի, այլև պարտապանի շահերը: Ընդ որում, չպետք է մոռացության մատնել այն իրողությունը, որ կանխամտածված սնանկությունը միջոց է առերևույթ օրինական ճանապարհով

³⁹⁷ Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://court.am/hy/statistic>:

³⁹⁸ Ընդունվել է 12.12.2019թ.: Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀԴՏ 2019.12.26/100(1553) հոդվ.1242:

³⁹⁹ Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: ՀՀԳՏ 2020.03.20/10 (678) Հոդ. 65:

⁴⁰⁰ Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: ՀՀԳՏ 2020.03.20/10 (678) Հոդ. 70:

⁴⁰¹ Տե՛ս **Сверчков В.В., Воронов С.С.** Преднамеренное банкротство юридического лица или предпринимателя: механизм преступного поведения и особенности квалификации // Вестник Нижегородской академии МВД России. Право. 2013, №21, էջ 159:

պարտապանի գույքային կազմից դուրս բերված գույքի նկատմամբ քողարկված ձևով սեփականության իրավունքը պահպանելու և այդ գույքի նկատմամբ պարտատերերի պահանջները չեզոքացնելու համար: Հետևաբար հենց այս առումով ևս մեղավոր անձինք պետք է պարտապանի հետ կրեն անվերապահ համապարտ պատասխանատվություն:

Հետաքրքրական է նաև այն հարցի պատասխանը, թե ինչ ընթացակարգի միջոցով պետք է ապահովվի մեղավոր անձի հաշվին պարտատերերի պահանջների բավարարումը, քանի որ Օրենքը լուրմ է այդ մասին: Այս առումով ուշագրավ է Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ այդպիսի պահանջ կարող է ներկայացնել միայն սնանկության գործով կառավարիչը սնանկության վարույթի շրջանակներում⁴⁰²: Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշման հիմքում դրել է հետևյալ պատճառաբանությունը. ««Սնանկության մասին» օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտների համապարտ պատասխանատվությունն օրենսդիրը կապել է բացառապես սնանկության գործով կառավարչի կողմից սնանկության վարույթի ընթացակարգերով սահմանված կարգով կատարված պարտապանի գույքի անբավարարության փաստի արձանագրման հետ, որից հետո պահանջատերերից յուրաքանչյուրի կողմից քաղաքացիական հայցի հարուցումը, հաշվի առնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, անվիճելիորեն կվառաբանվի մյուս պահանջատերերի վիճակը և անհավասար պայմաններ կստեղծի նրանց համար, իսկ բոլոր պահանջատերերի կողմից նման հայցի հարուցումը կխաթարի սնանկության վարույթի իրականացումը՝ անհնարին դարձնելով օրենքով սնանկության գործով կառավարչի վրա դրված պահանջատերերի պահանջների համաչափ բավարարման առաքելությունը»:

Ակնհայտ է, որ այս դիրքորոշումը համահունչ է սնանկության վարույթի էությանը և սնանկության կառավարչի կարգավիճակին: Այնուամենայնիվ, ընդհանուր գաղափարների արձանագրումը բավարար համարվել չի կարող, և խնդիրը պահանջում է համապարփակ օրենսդրական կարգավորում:

Միևնույն ժամանակ չպետք է բացառել այնպիսի իրավիճակները, երբ կանխամտածված սնանկության փաստը բացահայտվում է սնանկության գործի ավարտից հետո, այսինքն՝ երբ սնանկության գործով կառավարչի լիազորությունները արդեն դադարել են: Նման պայմաններում հարցը ենթակա է լուծման քրեական դատավարությունում պատճառված վնասի հատուցման ինստիտուտների, մասնավորապես տուժողի կողմից քաղաքացիական հայցի հարուցման միջոցով: Ընդ որում, այդ դեպքում կիրառելի չէ սնանկության վարույթի ավարտով պայմանավորված պարտավորություններից ազատելու մոտեցումը, քանի որ այս իրավիճակը տեղավորվում է Օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասի «դ» կետով սահմանված բացառության դեպքի շրջանակներում: Մասնավորապես խոսքն այն մասին է, որ սնանկության վարույթի ավարտով հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորությունների կատարումից ազատում տեղի չի ունենում:

Եզրակացություն

Այսպիսով՝ կանխամտածված սնանկության դեպքում պարտատերերի պահանջների բավարարման հիմնահարցերի կապակցությամբ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Կանխամտածված սնանկությունը կարելի է բնորոշել որպես ոչ իրավաչափ սնանկության դրսևորում, որն արտահայտվում է շահագրգիռ անձի կողմից ֆինանսապես առողջ պարտապանի սնանկության հատկանիշների առաջացման

⁴⁰² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՇԴ/0743/02/12 քաղաքացիական գործով 18.07.2014թ. որոշումը:

ուղղված միջոցառումների իրականացմամբ՝ նպատակ ունենալով ստեղծել պարտապանի գույքի հաշվին պարտատերերի պահանջների բավարարման անհնարինություն:

2. «Կանխամտածված սնանկություն» հասկացությունը կիրառվում է քաղաքացիաիրավական և քրեաիրավական առումներով: Ընդ որում, քաղաքացիաիրավական առումով կանխամտածված սնանկության փաստի հաստատման համար անհրաժեշտ է ավելի նեղ փաստակազմ, քան քրեաիրավական առումով կանխամտածված սնանկության դեպքում:

3. Եթե քրեաիրավական առումով կանխամտածված սնանկության փաստի հաստատումը հնարավոր է բացառապես քրեական դատավարության շրջանակներում, ապա քաղաքացիաիրավական առումով այն կարող է հաստատվել նաև քաղաքացիական դատավարության կարգով:

4. Միջազգային փորձին համահունչ անհրաժեշտ է հրաժարվել կանխամտածված սնանկության հանցակազմի մեջ ներառված խոշոր վնաս պատճառված լինելու պայմանից, քանի որ առանց սնանկության վարույթի ավարտման հնարավոր չէ այս պայմանի առկայությունը, իսկ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի մյուս գործողությունները՝ անվճարունակության հատկանիշների ստեղծումը կամ դրանց չափի ավելացումն արդեն իսկ հանգեցնում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտմանը, այսինքն՝ ունեն հանրային մեծ վտանգավորություն:

5. Կանխամտածված սնանկության հատկանիշների բացահայտման հարցում հիմնական դերը վերապահված է սնանկության գործով կառավարչին, որ այդ առաքելությունն առաջին հերթին պետք է իրացնի պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության միջոցով: Ընդ որում, խիստ արդիական է պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության մեթոդիկայի մշակման հարցը, որը պետք է ներառի պարտապանի գործունեության ոչ միայն ֆինանսական, այլև տնտեսական ասպեկտներին առնչվող դրույթներ:

6. Կանխամտածված սնանկության հիմքով մեղավոր անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը սնանկության վարույթի ընթացքում ենթակա է կիրառման բացառապես սնանկության կառավարչի հայցով, որի հետ կապված հարաբերությունները պետք է ստանան օրենսդրական համապարփակ կարգավորում:

7. Կանխամտածված սնանկության հիմքով մեղավոր անձանց դեմ միայն պարտապանի գույքի անբավարարության դեպքում պահանջ ներկայացնելու հնարավորությունը խնդրահարույց է, քանի որ չի բխում սնանկության վարույթում պարտատերերի և պարտապանի շահերի՝ հավասարակշռություն գտնելու հրամայականից և անհարկի երաշխիքներ է ստեղծում մեղավոր անձանց համար:

8. Սնանկության վարույթի ավարտից հետո կանխամտածված սնանկության հետևանքով վնաս կրած անձի պահանջների բավարարումը հնարավոր է քրեական դատավարությունում ներկայացված քաղաքացիական հայցի կամ քաղաքացիական դատավարության կարգով ներկայացված հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հայցի հիման վրա: Ընդ որում, այստեղ կիրառելի չէ սնանկության վարույթի ավարտի հիմքով պարտավորություններից ազատելու ինստիտուտը:

PROBLEMS OF THE ENFORCEMENT OF CIVIL LIABILITY ON THE BASIS OF PREMEDITATED BANKRUPTCY

TIGRAN MARKOSYAN

Yerevan State University, Faculty of Law, Student Law Counselor Center,

Lecturer-Coordinator, Ph.D. in Law;

*State Commission for the Protection of Economic Competition
of the Republic of Armenia, member;*

*Commission for the Qualification of the Bankruptcy, member, Manager,
Yerevan, Republic of Armenia*

The article is devoted to the study and analysis of the problems of premeditated bankruptcy, which is one of the institutions that plays a significant role in insolvency proceedings. Based on the legislation of the Republic of Armenia, foreign legislation, materials of legal practice, as well as theoretical sources, the essence of premeditated bankruptcy, the main forms of its manifestation, the need for a proper analysis of the financial condition of the debtor are discussed, and the processes of protecting creditors in the event of premeditated bankruptcy are disclosed.

In the course of the research, both general scientific (analysis, synthesis) and special (comparative legal, systematic, static) methods were applied.

As a result of the study, the author concludes that there is an urgent need to develop the legislation and legal practice in connection with premeditated bankruptcy, which involves revision the conditions for the emergence of civil liability in bankruptcy proceedings on this basis and establishing an appropriate procedure, taking out the element of causing harm from the criminal aspect of deliberate bankruptcy, as well as the development of model documents in this area.

Key words: *unlawful bankruptcy, premeditated bankruptcy, analysis of the debtor's financial condition, bankruptcy manager.*

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ГРАЖДАНСКО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ НА ОСНОВЕ ПРЕДНАМЕРЕННОГО БАНКРОТСТВА

ТИГРАН МАРКОСЯН

преподаватель-координатор центра студенческих юридических консультаций

юридического факультета Ереванского государственного университета,

член Государственной комиссии по защите экономической конкуренции

Республики Армения,

член квалификационной комиссии управляющих

по делам о банкротстве, кандидат юридических наук,

г. Ереван, Республика Армения

Цель статьи – исследование и анализ проблем применения гражданской ответственности на основе преднамеренного банкротства – одного из институтов, играющих значительную роль в процедурах банкротства. Задачи исследования – раскрыть суть преднамеренного банкротства, основных форм его проявления, выяснение значения

надлежащего анализа финансового состояния должника, а также выяснение процедур защиты кредиторов в случае преднамеренного банкротства.

В ходе исследования были применены как общенаучные (анализ, синтез), так и специальные (сравнительно-правовой, систематический, статический) методы.

В результате исследования автор делает вывод о безотлагательной необходимости развития законодательства и юридической практики, связанной с преднамеренным банкротством, которая наряду с другими мерами предполагает пересмотр условий возникновения гражданско-правовой ответственности по делам о банкротстве на этой основе и установление соответствующей процедуры вынимания элемента причинения вреда из объективной стороны уголовно-правовой точки зрения преднамеренного банкротства, а также разработку методики анализа финансового состояния должника.

Ключевые слова: *неправомерное банкротство, преднамеренное банкротство, анализ финансового состояния должника, управляющий по делу о банкротстве.*